ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0077, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 26

«11» Հոկտեմբերի 2011 թ.
№ Ղ-1904

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Դ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սարգսյան,

Ի պատասխան Ձեր 2011 թվականի հոկտեմբերի 26-ի N 02/12.10/17251-11 գրության՝ Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետությունում Շվեյցարիայի Համադաշնության դեսպանության և հյուպատոսական հիմնարկի աշխատակիցների ընտանիքների անդամների աշխատանքային գործունեության նպատակով փոխադարձության սկզբունք կիրառելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ ուղարկում ենք Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի իրավաբանական վարչության եզրակացությունը:

Առդիր՝ 1 էջ:

Հարգանքով՝

Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ... ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
Ընդ. գրանցում 010-33734
11.11.11

Հ. Դաշտոյան

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ «ՀՀ-ՈՒՄ ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ՀԱՄԱԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՓՈԽԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ կառավարության «ՀՀ-ում Շվեյցարիայի Համադաշնության դեսպանության և հյուպատոսական հիմնարկի աշխատակիցների ընտանիքների անդամների աշխատանքային գործունեության նպատակով փոխադարձության սկզբունք կիրառելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ առկա են հետևյալ դիտողությունները: Նախագծի՝

1/ վերնագրում նշվում է «հյուպատոսական հիմնարկ», իսկ 1-ին կետում «հյուպատոսական հիմնարկներ»: Առաջարկում ենք վերնագրի «հիմնարկ» բառը փոխարինել «հիմնարկներ» բառով՝ համապատասխանեցնելով 1-ին կետին,

2/ 2-րդ կետի 2-րդ ենթակետը «ընտանիքի անդամները» բառերից հետո նպատակահարմար է լրացնել «առանց աշխատանքի թույլտվության» բառերով, ինչի արդյունքում առավել հստակ կտարանջատվի համապատասխան ընտանիքի անդամների համար նախատեսվող արտոնությունը՝ առանց աշխատանքի թույլտվության աշխատանքային գործունեությամբ զբաղվելու համար,

3/ 2-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» և «բ» ենթակետերում «իրավազորության» բառը առաջարկում ենք փոխարինել «ընդդատության» բառով՝ համաձայն «Դիվանագիտական հարաբերությունների մասին» Վիեննայի կոնվենցիայի 31-րդ հոդվածի:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
Պ Ե Տ

Ա. ԹՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Լ. Վիրաբյան